



## ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՎԱՐԴԱՄԱՆՅԱ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՇԴԻՍՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

2000 թվականի մարտի 4-ին, ժամը 18.00-ին, Ծննմարանի հանդիսությունների ղահիձում, բարձր եախազահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Աննային Հայոց Կաթողիկոսի, դեռի ունեցավ հանդիսություն՝ նվիրված «Մրրոց Կարդանանց գօրավարաց մերոց հազար երեսուն և վեց վկայիցն»:

Հանդիսության բանախոսության մասի ղեկավարն էր Տ. Եղիշե ավագ քին. Սարգսյանը, իսկ երաժշգական մասին՝ պրա Շնորհն Շարքաթյանը (հանդիսության անցկացման ողջ ծանրությունը իր վրա էր վերցրել Ծննմարանի Զարարան):

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, ապա հենցեցին Ռ օրիններզը և Շնորհը Ծննմարանի բայցերզը: Բացման խորով համեմատ եկավ Շովիաննես սարկավագ Խաչադրյանը:

«Վեհափառ Տեր և սիրելի ունկնդիրներ.

Այսօր հավաքվելով այս ղահիձում՝ մենք ևս մեկ անգամ գոնսախմբում ենք Վարդանանց հիշագրակոր:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

Ահավասիկ, սիրելի ներկաներ, անմահության զադրիները: Ահա այս նշանարանն ունենի մեր բոլոր հերոսները, որոնք իրենց կյանքը զիկակցաբար ընծայեցին հանուն իրենց համոզումների և դրանով է արժուորեցին այն, որովհետք մարդուն կյանք է փրկված, որպեսզի նա այն ապրի ճիշդ և եթև հարկն է՝ զոհաբերի ճիշդ վեսդին և Ժամանակին: Ահա այս ոգով էին ներշնչված մեր նահապակները և մեր կենդանի մարդիրոսները, որոնք անցնելով ներ և փշով ճանապարհով՝ զնացին դեպի անմահություն, դեպի անմարդչի լոյսը: Ահա մեր բոլոր նահապակների գոնը միացնելով՝

Վարդանանց գոնին ամեն դարի հայ ժողովուրդը մեծ ոգևորությամբ վերարժնացնում է նրանց հիշապակը մեկ անգամ և՝ ապացուցելով մեր պատմիչ Եղիշեի խոսքերը, որոնք վերաբերում են այն մարդկանց, ովքեր զիտեն իրենց կյանքի արժեքը:

Մարդիկ կան, որոնք իրենց մահվանից հետո ավելի մեծ գործեր են կարարում: Այս այդ մարդկանցից էին Վարդանանք, ովքեր չերերացին և չերկմբեցին, այլ մահը իրենց աջքի առջև ունենալով՝ արիարար ճակարտամարդեցին, որովհետև հավաքում էին առաջայի խոսքին, թե մեր պատերազմը մարմնի և արյան դեմ չէ, այլ գորությունների և պետությունների: Այս հավաքով է, որ 451 թ. Ավարայրի դաշտում դեղի ունեցած ճակարտամարդում հայ ժողովուրդը դարձավ հոգու հաղթանակ, և այդ հաղթանակի ոգին է, որ մինչև այսօր առաջնորդել և առաջնորդում է մեր ժողովրդին դեպի նորանոր հաղթանակներ:

1920 թվականից արգելվել էր հիշապակել հայ քաջերի օրը: Սակայն 1951 թվականին Գևորգ Զերանաշնորհ Կաթողիկոսը ցանկացավ կատարել Վարդանանց 1500-ամյակը: Այդ դարվա համար նա թույլ չփվեց դասախոս երավիրել հանդեսի բանահոսությունների համար, այլ այդ ամենը հանձնարարեց այդ դարվա ավարդական լսարանի նաներին, որոնք նաև Հոգևոր Ճեմարանի առաջին շրջանավարդներն էին:

Վեհափառ Տեր. Զեր կարգադրությամբ այս դարվա հանդիսության կազմակերպումը հանձնվել է մեզ՝ վեցերորդ լսարանցիներին: Այդ լուրը մենք ընդունեցինք մեծ ուրախությամբ, քանի որ այս հանդեսով մենք հնարավորություն ենք ունենում մեր հոգու խոսքը հայրների:

Վեհափառ Տեր. այսօրվա բոլոր ներկաների և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի աշխարհակազմի անոնից ուզում եմ շնորհավորել Զեր անվանակոչության դուռը, ցանկանալ Զեր երկարամյա, բնոլուն հայրապետական օրեր, և թող որ հանդեսից հետո մենք բոլոր Զեր դեմքին նկատենք այն ուրախության նշույները, որը նկատել էին Գևորգ Հայրապետի սաները իրենց հանդիսությունից հետո:

Այսրանով, Վեհափառ Տեր, թույլ դվեր հանդիսությունը համարել բացված»:

**Արդարագոյ սրկ. Զարարյանն ընթերցեց հարված Մարթեռուի Ավելարանից:** Գրիգոր Նարեկացու «Մարյան ողբերգության»-ից հարված արդասանեց Արմեն Բաղայանը: Գևորգ Զ Կաթողիկոսի՝ Վարդանանց դոմին նվիրված կոնդակից մի հարված ընթերցեց Խաչիկ Ավելիսի Ավելիսիանը: Ճեմարանի երգչախոմբը բարձր կարարողական արվեստով կապարեց Մ. Եկմալյանի «Տեր, կեց Դու զ Հայ» երգը (մենակապար՝ Մասիս Խաչյան):

«Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին մինչև Ավարայրի եերոսամարդը» խորագրով բանախոսությամբ հանդես եկավ Վարդես Մանուկյանը:

«298 թ. Մօքինի դաշնագրով ավարդվեց հոռմեա-պարսկական պատերազմը: Տրդագր Գ-ի օրոր Հայաստանում դեղի ունեցավ դարակազմիկ իրադարձություն՝ քրիստոնեությունը դարձավ պետական կրոն:»

Տրդագր, լինելով հմուտ և հեռադիմ ռազմա-քաղաքական գործից, ոչ միայն գաղափարապես պետք է հիմնավորեր իր թագավորության անհրաժեշտությունը, այլև համախմբեր և միավորեր երկիրը՝ միաժամանակ պայքարելով կենտրոնախույս ուժե-

րի դեմք: Զուր բաղարական գեսանկյունից դիմարկելով, այդպիսի ուժ կարող է բառ- նալ իմ աշխարհին նոր լիքը հաղորդող քրիստոնեական գաղափարախոսությունը:

Տրդակ Մեծն անձամբ քրիստոնեալությանը կարող է ծանոթ լինել Դիոկղակիա- նոսի (284-304) արքունիքում և այս գործությունում կազմակերպության համա- խմբող ուժը և քրիստոնյաների կեցվածքը գրավում է ին նոյնինի նրանց հակա- ռակրողների ուշադրությունը: Ասում կամքով և գնորդմանությամբ 301 թվականին քրիստոնեալությունը Հայոց աշխարհում հոչակեց պետական կրոն:

Այս պարմական թվականով սկզբնավորվում է Հայ ազգային Եկեղեցին և իմբ դրվում հայոց պարմության ուժի շրջանին: Հայաստանում քարոզված քրիստոնեա- լությունը միակերպ չէ: Այն իր հետո բերում էր գարաններ գաղափարներ և կողմնո- րոշումներ:

Ասորադիակ և հունադիակ քրիստոնեական ուղղությունների առկա ներհակու- թյունն ավարտվեց վերջինին հստանակով:

Երկրում հունական դպրության կրթօջախների կողքին հիմնվում են նաև ասորա- դիակ դպրոցներ: Գրիգոր Լուսավորիչը կարուրում է նաև Աշփիշարի դերը, Կեսա- րիայից վերադասնախիս այցելում նաև այդ կարևոր Վրոռ:

Այս շրջանում Եկեղեցին հայացավ, որը պայմանավորված էր գրերի զյուկով, 405 կամ 406 թ: Սուրբ Մեսորով Մաշտոցը և Սուրբ Սահակ Պարթևը հայ ժողովորդի մեծամուն երախտավորներն են, ովքեր «Զքանին ական պարտեալ, Զիմաստութիւն սերմանեալ»:

Սուրբ Սահակը և Սուրբ Մեսորովը կարողացան իրականացնել իրենց նախորդ- ների՝ Գրիգոր Լուսավորիչի ու Տրդակի նրազանքը: Հայ Եկեղեցին եղել է մեր ժողո- վորդին փրկող ու պաշտպանող անսասան ուժը, որի վառ ապացույցը «Վարդանանց հոգևոր հաղթանակն է»:

Ապա երգչախումբը կապարեց «Նորամերաշ» շարականը, որից հետո «Հայ հո- գնորականների մասնակցությունն Ավարայրի հերոսամարտին» բանախոսությամբ հանդես եկավ Նեղոն սրկ. Բարայանը:

«Խաղաղադիենք Հայոց աշխարհում մոլեզնում էր պատերազմի արհավիրքը: Հազկերպը, զահակալության սկզբից ներ, իր կայսրության արևմդյան և հյուսի- սային սահմաններում ապրող քրիստոնյաներին, և մանավանդ հայերին, դավանա- փոխ անելու ծրագիր էր հետաքեզ: Հազկերպը հրաման-նամակ է ուղարկում հայերին՝ ուրանալ քրիստոնեական հավաքը և ընդունել մազդեզական կրոնը:»

Հայ հոգևորականները Հազկերպի նամակին պարապիսանում են՝ հերենով Պար- սից կրոնի սկզբունքները. «Յայս հաւաքոց ոչ ոք կարէ զմնզ խախտել, ոչ է հրեշտակը եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք»:

Պարսիկները չարաչար սխալվում էին: Տասնըորս դարեր հետո ֆրանսիացի մած հումանիստ և գիտեական Անդրուան Մեյեն պիդի ասի. «Չկա ավելի դուկուն ազգային ողի, քան հայկական», որովհետև Անդրուանը հավաքարիմ մնացին արյամբ ներկ- ված Ավերարանի պարզամին. «Ով ուզում է զալ իմ եփսից, թող ուրանա իր անձը»:

Աւտոնյանք՝ մեր Եկեղեցու ուխտապահ և սուրբ գինվորները, նահարակ քաջերը մեր հայրենիքի, իրենց անձը գոհեցին հանուն Ասպուծ, հանուն հայրենիքի, որպեսզի ոչ միայն իրենց միջոցով հավելք ապրեն մեր Երկիրն ու նրա ժողովուրդը, այլև մեր Առաքելական Եկեղեցին, որի սպասավորությանն այդպես անկաշար ծառայեցին իրենք:

Մենք, որպես Հոգևոր Ծննդարանի սաներ, հպարտանում ենք նրանով, որ մեր պատրության յուրաքանչյուր դժվարին և օրիասական պահերին հայ հոգևորականը բերել է իր անմիջական մասնակցություն՝ հեղեղով իր արյունը ոչ միայն «վասն հաւաքոյ», այլև «վասն փրկութեան ժողովլոյի»: Դիշենք Զեյթունը, Սասունը, Բաշ Ապարանը, Սարդարապատը, Երկրորդ համաշխարհայինը, Արցախը և որիշ ճակարամարտեր, որդեղ հայ հոգևորականն իր անմանցորդ մասնակցությունն է բերել: Վարդանանց հերոսամարտը գտնն է բոլոր այն հայորդիների, որոնք գիրակցված մահով պատրաստ են իրենց կյանքը դնելու հայրենիքի և մեր Սուրբ Եկեղեցու զոհասեղանին: Մեզ համար անհրաժեշտորեն կարևոր է, որ Ավարայրից մինչև Սարդարապատ ու մինչև Արցախ եղել են և կան Հովսեփ Հողոցմեցի Կաթողիկոսներ, Ղևոնդ Երեցներ, որոնք իրենց հայրենասիրությամբ, հուժուու խոսքով և գործով դարձել են դարի ոգին: Այս իմաստով Ղևոնդյանց նահարակությունը հերոսացումն է Հայ Եկեղեցու, իսկ Ավարայր՝ հավաքական սրբացումը հայ ժողովրդի»:

*Մ. Եկմայլյանի «Երգ մետնող հայրենասերի» երգի կարարումից հետո Վարդգես սրկ. Մայիսյանը հանդես եկավ «Եղիշե պարմիջը և նրա «Հասն Վարդանայ և հայոց պատերազմին» գրի արդիական նշանակությունը» բանախոսությամբ:*

«Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու արդարոցն և հեղումն արեան մերոյ ընդ արին սրբոց մարդիրոսացն եւ հաճեսցի Ասպուած կամաւոր պատրագաւս և մի՛ տացտ գեկեղեցի իր ի ձեռու հեթանոսաց»:

«Թող մեր մահը հավասարվի արդարների մահկանը և մեր արյան հեղումը՝ սուրբ մարդիրոսների արյան հեղումին, և թող Ասքծուն հաճելի լինի այս կամավոր զոհաբերությունը և իր Եկեղեցին չմատնի հեթանոսների ծեռը»:  
(ԵՆԻԾԵ)

1500 Երկար ու ձիգ տարիներ են անցել այն օրից, երբ ալխոսիկն Եղիշեն իր ձեռքն առավ փետուրե գրիջը և Երկնեց քաջերի ու քաջազրությունների մասին իր հերոսապարում Երկը: Գրում է պարմիջը, հյուսում է քաջաց պարմությունը, անմահացնում նրանց անոնները, աղործում, որ Տերը նրանց բափած անկորնչելի արյան գնով ժառանգած Երկնային Արքայությունից իրեն էլ մաս և բաժին հանի:

Ինչպես մեր բանախոսության վերբառությունն է հուշում, մեր ուշադրության կենտրոնից դուրս ենք թողնելու պարմականը և Ժամանակաշրջանին բնորոշ վերլուծումներն ու առանձնահարգելությունները: Կանգ պիտի առնենք կարևորագույն հարցերից մեկի վրա, այն է՝ Եղիշեի Երկի արդիական նշանակությունը, Վարդանանց ոգու կանչը Երեկ և այսօր:

Մնացանից շարերը կարող են միանգամից մրածել կամ ասել. «Այդ ի՞նչ հարց է որ Վարդանանք միշտ է արդիական են»: Այսպիսոյ, սակայն, ձեր ներողամբությունը հայցիով՝ ցանկանում ենք կանգ տանել կարևոր մի քանի հանգանակների վրա:

Ինչո՞ւ ենց Վարդանանց հերոսամարտը եշանափորինց, ճիշտ է արդյոք քննադատի Վարդանի ռազմավարությունն այսօրվա աշքերով, և արդյոք մննք ունենք այսօր այն հավաքքը ու նվիրումը մեր հայրենյաց, մեր Ս. Եկեղեցու նկարմամբ, ինչը որ անորանայի ճշմարդություն էր Վարդանանց պարագային:

Ժամանակի քննադատությունը դաժան և անգույք է բոլորի նկարմամբ: Մեկ անգամ սխալվածը մնկրնդիշտ կարող է ձաղկվել, խարազանվել, ինչպես մննք գենում ենք դաշտանական նախարարների, գորավարների պարագային:

Եվ վերջապես, ինչո՞ւ ենք առավել պահճացնում Վարդանանց, որոնք ըստ Եղիշյան պարտվեցին, երբ նրանց կողքին կան արժանապարփորներ թշնամուն ճգնած և հաշվություն պարբաղրած Վահանյանը:

Այսպիսի խոսեցնենք մեր մեծերից Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովհաննին. «Ազգերի կյանքի մեջ կան շրջաններ և երևոյթներ, որոնք նշանակություն են սրբանում դարերի համար, նրանք առանցքն են դատում նոցա պարմության», - գրում է նա:

«Այսոց մեջ դարերի համար նշանակություն պարագան.

ա) 301 թ. քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն.

բ) հայոց գրերի գյուղը 405/406 թ.՝ որպես ազգային մրածողության և ինքնության հիմք.

զ) անպայման 451 թ. Վարդանանց հերոսամարտը՝ իբրև քրիստոնյա ազգ ինքնուրույնաբար ապրելու, ապրեցնելու, արարելու հիմք:

Այսօր էլ մեր հիշողությունների մեջ դեռ թարմ են արցախյան հերոսամարտի քաջազրությունները: Ո՞վ կարող է մոռանալ բազմահարյուր այն տղաներին, ովքեր գոյանարդից առաջ մկրտվեցին, կնքվեցին Տիրոց ամենահայր Խաչի նշանով և հաղթություն փարան, կամ էլ իրենց արյունը խառնեցին Արքոց Վարդանանց և հազարավոր այն մարտիրոսաց արյանը, որոնք ընկան «Վասն հաւատոյ և վասն հայրեննեաց»: Այսօր էլ մննք կարող ենք ականջալոր լինել այն փասթերին, որ հերոսներից շարերը Վարդանանց օրինակով գոյամարտերից առաջ իրենց մեջ ընդունեցին Քրիստոնի փրկարար Մարմինն ու Արյունը: Ինչո՞ւ ենք մննք միշտ ասում, թե Վարդանանց պատերազմը շարունակական է: «Որովհեք երբեք միայն պարմության մեկ էջը չէ մեր ժողովրդի կյանքում», - ասում է մեծերից մնկը:

«Այսօր էլ նոյն պատերազմն ունենք, - ասում է Գարեգին Ա Հովհաննիան Վեհափառը, - ոչ զննիք, ոչ հալածանքի դեմ ծառանալու, այլ մի որիշ գենակի ահավոր թշնամու, որ անբարերության հոգի է կոչվում...»: Լայն քացենք մեր աշքերը և գենսներ իրականությունը՝ ինչպիսի անդունի է բաժանում Վարդանանց մեզանից, և մի պահ երևակայենք, թե ինչ է ասում հիմա երկնքից Ս. Վարդանը, թե ինչպես է բախում մեր կարծրացած սիրով և ասում. «Ուշիք՝ արի, հայ մարդ, ո՞ր ես գնում»:

Վարդանանց հոգին չեր արդյոք Դերենիկ Դեմիրճյանին մղում գրելու իր պարմավեպը: Ամեն դեռ երևում է Եղիշի կնիքը: Նա կնքեց իր պարմությունը նահարակաց սուրբ արյունով և առաքեց դարերից եկող և դեպի դարերը զնացող հայկան զարմին՝ իրքն ժառանգություն, իրքն սրբություն, իրքն ճանապարհ Երկնային թագավորության: Ուրեմն պաշտպան լինենք հենց դրան»:

**Այնուհետև երգախումբը փայլուն կերպով կարարեց Մակար Եկմալյանի «Լոեցը» (մենակարար Հարություն Տերքերյան), որին հաջորդեց Դրանդ սրբ. Կոստանդնուպոլիսի «Վարդանանց պարերազմի դասերը» բանախուտթյունը:**

«Այսօր իսկապես մեր ժողովրդի միահավաքության խորհուրդն ընդգծող սրբազն գոյներից է և, եթե չեմ միսալվում, բոլորից փիրական գոյնն այն միաբանության, որին դարեր ի վեր մենք բոլորս ձգվել ենք, փափազել ենք, կորցրել և վերագրել ենք:

Մեր պարմության խրացումն է Ավարայրը, ուր խաչն ու սուրբ միասին են շողացել: «Տուր զկայսեր՝ կայսեր, եւ զԱսպուծոյ՝ Ասպուծոյ» (Մարկ. ԺԲ 17):

Պայքարն ընթանում էր լոյսի և խավարի որդիների միջև: Վարդանանք արթուն մնացին, հավարքի զրահներ հազան և փրկության հոյսի սաղավարդներ դրեցին: Նրանք հայրարարեցին, որ Ասպծո սերն ավելի մեծ է, քան ամեն երկրավոր մեծություն:

Եվ այսօր մենք հիշաբակում ենք Վարդանանց գոյնը ոչ թե մարդուն փառաբանելու, այլ Ասպծո ծշմարիկ զավակներին՝ Սուրբ Դոգով ներշնչված Ասպվածահանու զրծունեությամբ Ասպծուն փառավորելու և փառաբանելու համար: Մենք հիշաբակում ենք վարդանանց պարերազմը, որպեսզի Ասպծուն մեր շնորհակալությունը հայտնենք՝ նման զավակներ ու վկաներ մեզ շնորհենու համար»:

**Ապա ճեմարանի երգախումբը կարարեց «Դպուկն Ավարայրի» երգը:**

«Նադիշության գեղարքվեսդրական մասի ավարդին Արման Հակոբյանը, Բարկեն սրբ. Բողիկյանը և Խաչիկ Ազետիսյանը արդասանեցին Պ. Սևակի «Եռաձայն Պարարագ»-ից մի հարված:

**Այնուհետև ճեմարանի գետուչ S. Բարկեն արդ. Սալբիյանը երավիրեց Վեհափառ Հայրապետին՝ օրինության խոսք ասելու ներկաներին:**

«Սիրեցյալ ուսանողներ Դոգսոր ճեմարանի, հարգարժան դասախոսներ և դեսցություն.

Վարդանանց գոյնի օրը բացակայում էինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և այսօր անշափ ուրախ ենք ներկա գյոնվելու Դոգսոր ճեմարանում կազմակերպված գոյնախմբությանը, որը, կարծում ենք, կրթական այս հասպատության հարկի դրակ անընդմեջ նշվել է նրա գոյության առաջին իսկ օրից: Դոգով բերկրանքով Մեր զնահարանը ենք բերում հանդիշության բոլոր կազմակերպիչներին՝ դեսցությանը, անմիջական պարապիսանարդկությունը սրբանձնած Տ. Եղիշ քահանա Սարգսյանին, երաժշտական մասի համար՝ պրի Ռուբեն Շարբաթյանին և մասնակից սաներին:

Վարդանանց գոյնի առիթով շնորհավորում ենք բոլորին, հագեցապես նրանց, ում անվանակոչության օրն է նաև այս գոյնը: Մասնավորաբար շնորհավորում ենք ճեմարանի երիտասարդ բանախոսներին, որ վերին լսարանի սաներն են: Ցուրաքանչյուրն իր նյութի շրջանակներում խորությամբ վեր հանեց պարմավան ժամանակը,

Վարդանանց հերոսամարտի նախադրյալներն ու շարժառիթները, մեծազոյն դասը մեզ ժառանգած, այսօրվան ու զայթիին փոխանցված: Մեր շնորհավորանքն ու գնահատանքը նաև այն տանուց, որ ասմունքի ու կրածխրական զերեցիկ կարարութեանը ամբողջացրեցին ու զարդարեցին հանդիսաւթյունը:

Միջոցառման առանցքը կազմող բանախտաւթյունները վկայեցին Շնարանի սանոց միքի և հոգու հաստության մասին, որ ընկապած Վարդանանց խորհուրդը ազգային մեր պարմարդյան մեջ՝ ներկայացրեցին այն անձնական հույզով ու նորով ապրումով:

Արդարն, Վարդանանք ապրում և ասյրելու ներ հայ կյանքի բղոր ժամանակներում իրենց գործով մարմին փարուղ մեր հայրաքսության խորհրդին, որ վերափին ու վերաբին ծնուն է առնում նոր սերունդների հոգիներում: Մերօրյա կյանքում նոյնական, առավել քան երբեմ, պետք ունենք Վարդանանց հավաքրի, Վարդանանց ոգու արթնությանը, բանզի ապրում ներ պարմական վճռորոշ մի ժամանակահարդարված, երբ անհրաժեշտություն է ամրագրել մեր Հայրենիքի ազագության և անկախության ձեռքբերումները, ազգային կյանքի հպատակները: Թանկ զնով ձեռք բերվածի պահպանումը և փառուղ չրաբու կարողությունը նոյնական հաղթություն է: Գիրինը, որ բղորդ օր օրի հետքում եր մեր երկրում ընթացող իրադարձություններին, հարկապես՝ հոգլուր կյանքում, որ նոյնական բիշ չնն խնդիրները: «Այ հավաքացայից և հայ նկեղեցականից այսօր պահանջվում է նոյնախիս նվիրում, նոյնախիս անվեհեր, մարփնչող ոգի, նոյնախիս հավաքարամություն, որի անմոռաց օրինակը 1500 դարիներ առաջ վկեցին Վարդանանք, Վոլոնյան քահանայր: Այսպես միայն պիտի կարողանանք պահպանել այն արժեքները, հանուն որոնց արյուն հեղեցին, կյանք նվիրաբերեցին մեր սուրբ նախնիք, և սերունդներին փոխանցել մեզ թողնված ժառանգությունը. մեր նվիրական Հայրենիքը, մեր սրբազն հավաքրը, Առաքելական մեր Մայր Եկեղեցին:

Թող Վարդանանց ոգին առաջնորդի հայորույաց դեպի ազգային իղձերի իրականացում, դեպի նոր հաղթանակներ, որպեսզի մեր կյանքով իսկ, մեր արյամք իսկ պարբռասպ գրնվենք պաշտպանելու, զրացնելու և շնացնելու մեր հայրենին ու հայրենականը: Մաղթում ենք ձեզ արիության ոգի, աննկուն կամք, անկեղծավոր հավաքր: Հայում ենք Բարձրյալից, որ մեր հայրենի քրիստոնեական լույս հավաքրը ձեզ համար լինի մաշկի գոյն՝ ամբաժանելի ձեր Էւրիունից, ձեր իմբնությունից և ձեր միջօնակ նաև՝ մեր ժողովրդից:

Եվ թող Ասքոն օրինությունը ուղեկից լինի ձեզ և մեր ժողովրդի բղոր զավակաց:

*Տանշիստությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիք»-ով:*

ՀՐԱՆՏ ՄՐԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ  
Զ լարանի սան

